

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԳԴԱԿ ՍՊԸ-ն ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2025/10 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում
Ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
12	<p>Սպիտակ գործվածքով և ոսկեգույն մակաշերտով լամբակ (երկկողմանի կաչուն ժապավենով ամրացող) Գնդապետի, փոխգնդապետ և մայոր` 250 զույգ Մաքսային ծառայության գնդապետի, փոխգնդապետի և մայորի լամբակներն ուղղանկյուն են: Չափերը` 4 սմ լայնությամբ և 7 սմ երկարությամբ, մակերեսը` սպիտակ (գունային կոդը` 11-0601TPG) գործվածքով և ոսկեգույն երկու մակաշերտով: Լամբակների հետևի մասում` երկկողմանի կաչուն ժապավեն` համազգեստին ամրացնելու համար: Կապիտանի, ավագ լեյտենանտի, լեյտենանտի և կրտսեր լեյտենանտի` 902 զույգ Մաքսային ծառայության կապիտանի, ավագ լեյտենանտի, լեյտենանտի և կրտսեր լեյտենանտի լամբակներն ուղղանկյուն են: Չափերը` 4 սմ լայնությամբ և 7 սմ երկարությամբ, մակերեսը` սպիտակ (գունային կոդը` 11-0601TPG) գործվածքով և ոսկեգույն մեկ մակաշերտով: Լամբակների հետևի մասում` երկկողմանի կաչուն ժապավեն` համազգեստին ամրացնելու համար: ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ * Մատակարարված ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Մատակարարը իր միջոցներով և իր հաշվին: ** Լամբակները պետք պետք է փաթեթավորված լինեն առանձին տուփորով` յուրաքանչյուրում 50 զույգ: *** Մատակարարը ապրանքի մատակարարումից առաջ պետք է համաձայնեցման ներկայացնի յուրաքանչյուր ապրանքատեսակից մեկ օրինակ որպես նմուշ` արտաքին տեսքը համաձայնեցնելու նպատակով: Հաստատված նմուշը հանդիսանում է պայմանագրով սահմանված քանակի մաս: Նմուշի հետ համատեղ` մատակարարը պարտավոր է ներկայացնել արտադրման համար օգտագործված բոլոր նյութերի նմուշները` ամրացված Ա4 չափի գծագրական թղթի (ստվարաթղթի) վրա: Ներկայացված նմուշները</p>

ստորագրում է Մատակարարը, որոնք հաստատվում կամ մերժվում են մասանագիտական խմբի կողմից՝ ներկայացնելուց ոչ ուշ քան երկու աշխատանքային օրվա ընթացքում: **** Մաքսային մարմնի հանրային ծառայողների կոչումների քանակը, համազգեստի և բաղկացուցիչ պարագաների չափսերը, լրացուցիչ կտրամադրվեն պատվիրատուի կողմից՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը, Մատակարարի Էլ.փոստին ծանուցում ուղարկելու միջոցով: ***** Մանրամասների համար օգտվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 8-ի «Մաքսային մարմնի հանրային ծառայողի համազգեստի ձևը սահմանելու մասին» N 1910-Ա որոշման դրույթներից, որում ներառված են յուրաքանչյուր չափաբաժնի տեխնիկական բնութագրում համապատասխան համարնով նշված նկարները, ինչպես նաև համազգեստի բաղկացուցիչ մաս կազմող մաքսային մարմնի հանրային ծառայողի տարբերանշանների տեխնիկական բնութագրերը:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ГДАК ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՊԵԿ-ԷՍՃԱՊՁԲ-2025/10 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
12	